

ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻ 77Դ՝ ՏԱՐԵԴԱՐԸ

Աւագ Ուրբաթ առաւօտեան, Ապրիլ 24, ժամը 10.30ին, Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը եւ Հայ հասարակութիւնը, առաջնորդութեամբ Ե. Հ. Բ. Միութեան, Հ. Ե. Միութեան եւ Հ. Մ. Ը. Միութեան սկաւառ-արեւմտեան, համդարտ փալուածով, եւ ցեղասպանութիւնը դատապարտող պաստառներու զուգադրութեամբ, թափօրով ուղղուեցաւ դէպի Սիոն Լեռան Ս. Փրկիչ եկեղեցին եւ Հայոց գերեզմանատունը, նախագահութեամբ Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր: Արարայի յուշարձանին շուրջ կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտամունք, թէ՛ Նդեռնի, թէ՛ երկրաշարժի եւ թէ Ղարաբաղ-Արցախի աղէտներուն առիթով նահատակուած մեր ժողովուրդի զաւակներուն հոգիներուն համար: Հ. Օ. Միութեան անդամուհիներէն Օր. Անի Սեւան յարգանքի խօսքով արտայայտեց ներկայ սերունդին յոյսը մեր ժողովուրդի ապագայի մասին եւ վեհակամութիւնը հաւատարիմ մնալու նահատակներուն ուխտին:

Նախորդ օրը յետ միջօրէին ֆանի մը ժամուան լուռ նստացոյց եւս կազմակերպուած էր, Վանքի մուտքին, եւ փողոցի երկայնքին:

Ապրիլ 24ի երեկոյին, կազմակերպութեամբ Ապրիլեան Նդեռնի Սաղիմահայ Միացեալ Յանձնախումբի, նախագահութեամբ Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր, տեղի ունեցաւ Ոգեկոչման Յուշահանդէս, ժառանգաւորաց Վարժարանի Սրահին մէջ:

Յայտագիրը կը բաղկանար, բացի խմբերգի եւ մեներգի բաժիններէն, ասմունքէն, եւ արտասանութեան հետ համատեղ սահիկներու ցուցադրութենէն, երկու հայերէն բանախօսութիւններէ (Լոս Անճելըսէն ուխտաւորաբար եկած եւ Երուսաղէմէն Նահապետ Մելիքեան ներկայացուց պատմական իրողութիւնները եւ ֆաղափական շարժառիթները թէ՛ Նդեռնի, եւ թէ Հայ Հայրենիքին կապուած ներկայ կացութեան: Իսկ Տիար Պետրոս Լէփէնեան, իրրեւ Նդեռնէն վերապրող, անդրադարձաւ իր սերունդի կրած զրկանքներուն եւ յաջորդ սերունդներու նուիրումին), իսկ Փրօֆ. Մանուէլ Հասէսեան անգլերէն լեզուով անդրադարձաւ անհրաժեշտութեան որ հայ ժողովուրդը տէրը կանգնի իր պատմական, հասարակական եւ ֆաղափական իրաւունքներուն:

Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր խրատները խօսքերէն եւ ներկայ Անկախ Հայաստանի Հանրապետութեան ապագայի մասին իր յուսադրիչ ակնարկութիւններէն յետոյ, ներկաները յոտկալաւ ունկնդրեցին Շահան Ռ. Պերպէրեանի "Քրիստոս Պատարագեալ" հոգեւոր երգը եւ "Մեր Հայրենիք" ֆալսետը, եւ արձակուեցան Պատրիարք Սրբազան Հօր օրհնութեամբ եւ խմբովին երգուած "Հայր Մեր"ով:

ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՄԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆ

UCLA-ի Նարեկացիի անուան հայագիտական ամբիոնի վարիչ՝ փրօֆ. Աւետիս Ասնեանը կը հաղորդէ, որ վերջերս լոյս ընծայուած է Journal of the Society for Armenian Studies-ի հինգերորդ (1990-91թթ) հատորը:

Հայագիտական Ուսմանց Միութիւնը հիմնադրուած է 1974 թուականին՝ սատարելու հայ մշակոյթի ուսումնասիրման, նպաստելու ամենուրեք հայագիտական գործունէութեան, վերաբերեալ տեղեկութիւններու փոխանակման, եւ կազմակերպելու հայագիտական գիտաժողովներ, սիմփոզիումներ եւ այլ ձեռնարկներ: Միութիւնը ձեռնարկած է նաեւ հայագիտական աշխատութիւններու շարքերուն, որոնք կ'ընդգրկեն կազմակերպութեան Տեղեկատուն, Հայագիտական Մատենագիտութեան Տարեգիրքը, Պարբերական Ուսումնասիրութիւնները, եւ